

ԳԱԳԻԿ ՀԱԿՈՐՅԱՆ

Ապահովագրական գործ, բակալավրիապ,
3-րդ կուրս

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հիմնաբառեր. ագրոապահովագրություն, պիլոտային ծրագիր, բուսաբուծություն, բնական աղբյուրներ, ապահովագրական ռիսկեր, վերաապահովագրություն, սուբսիդավորում

Գյուղատնտեսությունը տնտեսության այն ճյուղերից է, որը բնական ուժերի անմիջական ազդեցությամբ ենթակա է վնասներ կրելու մեծ ռիսկի: Այդ իսկ պատճառով զարգացած գյուղատնտեսություն ունեցող բոլոր երկրներում գործում են այդ ոլորտի ապահովագրման կայացած համակարգեր, որոնք էլ նպաստում են հնարավոր վնասների ու կորուստների նվազեցմանը:

Սույն հոդվածում քննարկվել ու ներկայացվել են զարգացած գյուղատնտեսություն ունեցող մի քանի տնտեսություններում ապահովագրության համակարգի հիմնական առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով հետազայում բացահայտել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանում:

Ագրոապահովագրությունը վերջին տարիներին աչքի է ընկնում զարգացման արագ տեմպերով: Ընդ որում, այն արդյունավետ է գործում միայն պետության կողմից երկարաժամկետ և մասշտաբային աջակցության շնորհիվ: Հատկանշական է, որ երկրներում, որտեղ կառավարությունն ագրոապահովագրությանը բավարար ուշադրություն չի դարձնում, զարգացումը տեղի է ունենում դանդաղ և համակարգային բնույթ չի կրում: Սովորաբար պետական աջակցություն չունեցող երկրներում տարածված են համակարգի զարգացմանը խոչընդոտող հետևյալ հիմնախնդիրները՝ ապահովագրական ծառայությունների ոչ բավարար քանակ (որպես կանոն, ապահովագրության են ընդունվում միայն առանձին կամ անվանական ռիսկեր), դեմպինգ, ագրոապահովագրությամբ զբաղվող ընկերությունների մեծ քանակ, ապահովագրողների նկատմամբ գյուղատնտեսությամբ զբաղված արտադրողների վստահության պակաս և այլն: Պետական աջակցությունն իրականացվում է գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ զբաղվողներին սուբսիդիաներ կամ այլ ֆինանսական օժանդակություն տրամադրելու ճանապարհով, որի ընտրությունը պայմանավորված է պետության որդեգրած ռազմավարությամբ, ֆինանսական հնարավորությամբ, քաղաքական կամարտահայտությամբ:

Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ պետության տեսանկյունից գյուղատնտեսական ռիսկերի կառավարման համար ամենաարդյունավետ տարբերակը դրանց ապահովագրությունն է, որն անհնար է կազմակերպել առանց մասնավոր հատվածի ներգրավման: Գործառույթների բաշխման տեսանկյունից տարբեր երկրներում պետության և մասնավոր ապահովագրական հատվածի միջև կիրառվող ագրոապահովագրության համակարգի

սկզբունքները կարելի է խմբավորել հետևյալ կերպ¹.

- ագրոապահովագրության սուբսիդավորման համակարգ՝ պետության նվազագույն մասնակցությամբ,
- սուբսիդիաների տրամադրում՝ պետական ապահովագրական ընկերությունների միջոցով,
- պետական-մասնավոր գործընկերային ծրագրեր:

Պետության նվազագույն մասնակցությամբ ագրոապահովագրության սուբսիդավորում գործում է Ավստրիայում, որտեղ 17 ապահովագրողներ ծրագրի համակարգման նպատակով 1947 թ. հիմնել են շահույթ չհետապնդող Die Österreichische Hagelversicherung² (DOH) ընկերությունը: Այստեղ գյուղացիական տնտեսությունների համար սահմանված են ապահովագրության սուբսիդավորման չափազանց խիստ պահանջներ: Ապահովագրությունն իրականացվում է *կամավոր եղանակով*, սակայն օրենսդրությամբ ամրագրված են ապրանքների ապահովագրության սուբսիդավորման նորմեր³: Ներկայումս սուբսիդավորվում է նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների մուլտիռիսկային ապահովագրությունը: Սուբսիդավորումն իրականացվում է *ապահովագրավճարի 50%-ի չափով*, որը ազգային կառավարությունն ու տեղական (մարզային) բյուջեները վճարում են հավասարաչափ: DOH-ի առաջարկած ապահովագրական սակագնի կառուցվածքում շահույթի մասնաբաժին չնախատեսելը հնարավորություն է ընձեռում սահմանել ավելի փոքր ապահովագրավճար: Ընդ որում, մեկ տարվա ընթացքում 100%-ից ցածր վնասաբերության պարագայում DOH-ը պարտավոր է կառավարությանը վերադարձնել անդերռայթինգի գծով ստացած շահույթի 25%-ը:

DOH-ը նաև քվոտա-համամասնական վերաապահովագրության մեխանիզմով և Stop-Loss սկզբունքով ծրագրի մասնակից ապահովագրողների ստանձնած ռիսկերը փոխանցում է միջազգային վերաապահովագրական ընկերություններին:

Պետական ապահովագրական ընկերությունների միջոցով սուբսիդիաներ տրամադրող երկրներից են Կանադան, Հունաստանը, Կիպրոսը, Հնդկաստանը և այլն: Այստեղ մասնագիտացված ապահովագրողները⁴ ծառայությունները մատուցում են կամավոր և պարտադիր եղանակներով: Գյուղացիական տնտեսությունները և կառավարությունը ապահովագրավճարի իրենց մասնաբաժինն անմիջապես վճարում են ապահովագրողներին: Ընդ որում, նահանգային և վարչական շրջանների իշխանությունները պետական սուբսիդիաները վճարում են ոչ համամասնորեն:

Ագրոապահովագրության սուբսիդավորման ծառայությունների մատուցումը պետական ապահովագրողների միջոցով սովորաբար նվազեցնում է դրա նկատմամբ մասնավորների հետաքրքրությունը: Հաճախ արտադրող-

¹ Տե՛ս Ա.Դադունց, Պետության մասնակցությամբ ագրոապահովագրության միջազգային փորձը, 2012 թ.:

² Վերջինս իր կազմակերպիրավական կառուցվածքով նման է ասոցիացիաներին:

³ Օրենսդրությամբ կարկտահարության ռիսկի նորմավորման պահանջն ամրագրվել է 1995 թ., ցածր ջերմաստիճանի հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերին պատճառված վնասների ռիսկերից պահանջը՝ 1997 թ. և այլն:

⁴ Հունաստանում ELGA, Կիպրոսում Agricultural Insurance Organization (AIO), Հնդկաստանում Agricultural Insurance Company, Կանադայում՝ այսպես կոչված ապահովագրության բնագավառի «թագավորական կոորպորացիաներ»:

ները նույնպես գոհ չեն լինում մատուցված ծառայությունների սահմանափակ քանակից (այս առումով բացառություն է Կանադան) ու որակից: Կանադայում մասնավոր ընկերությունները որպես կանոն վաճառում են կոնկրետ անվանական ռիսկերի (կարկտահարություն, հրդեհ) վկայագրեր¹, իսկ մուլտի-ռիսկային (համակցված) ապահովագրական ծառայությունները հասանելի են միայն պետական ապահովագրողների միջոցով:

Կանադայում ծրագրի առանձնահատուկ գծերից է ապահովագրության բոլոր պրոդուկտների գծով ակտուարային մեթոդով հաշվարկված սակագնի կիրառումը: Դրա համադրումն այլ երկրների փորձի հետ վկայում է, որ սակագներն այստեղ բավականին բարձր են (7-12%) և համարժեք կերպով են արտացոլում ռիսկի իրական մակարդակն² ըստ մշակաբույսերի և տարածաշրջանների: Հունաստանին և Կիպրոսին բնորոշ է սակագների ցածր և վնասաբերության բարձր՝ հաճախ 100%-ը գերազանցող մակարդակ: Ընդ որում, վնասաբեր տարիներին կառավարությունները ստիպված պետական բյուջեից, վերադարձելի փոխառությունների տեսքով, պարբերաբար ֆինանսական աջակցություն են տրամադրում ծրագրի համակարգող կազմակերպություններին:

Միջազգային շուկաներում գործող բարձր դրույքաչափերի պատճառով հունական ELGA և կիպրական AIO ընկերությունները ստանձնած ռիսկերի վերաապահովագրություն չեն իրականացնում, իսկ ահա կանադական «թագավորական կորպորացիաները» հնարավորություն ունեն քվոտա-համամասնական և Stop-Loss մեխանիզմի հիման վրա ստանձնած ռիսկերը տեղաբաշխել պետության մեջ³ կամ միջազգային վերաապահովագրական շուկայում:

Ապահովագրական ծառայությունների որակի բարելավման, մշտական բարձր վնասաբերության (150–300%) կրճատման, մրցակցության բարձրացման և նոր ապահովագրական ծառայություններ առաջարկելու ակնկալիքով Հնդկաստանում և Հունաստանում քննարկվում է ագրոապահովագրության սուբսիդավորման համակարգի վերաձևափոխման հնարավորությունը՝ մասնավոր ապահովագրողներին⁴ ծրագրում ներգրավելու նպատակով:

Ագրոապահովագրության պետական-մասնավոր գործընկերային ծրագիրը պետության և մասնավոր հատվածի միջև համապատասխան գործառույթների և պարտականությունների բաշխման եղանակ է, որը կիրառում են ԱՄՆ-ը, Իսպանիան, Իտալիան, Թուրքիան, Չինաստանը, Բրազիլիան, Սուդանը, Մալավին և այլն: Այս ծրագրում կողմերի իրավունքների ու պարտականությունների բաշխումը պայմանավորված է յուրաքանչյուր երկրի պետական կառուցվածքի և օրենսդրության առանձնահատկություններով, ա-

¹ Կանադայում հրդեհ-կարկտահարությունից մշակաբույսերի ապահովագրությունը չի սուբսիդավորվում, ինչը մասնավոր ապահովագրողներին հնարավորություն է տալիս մրցակցել «թագավորական կորպորացիաների» հետ:

² Ապահովագրավճարի դրույքաչափի կառուցվածքում պայնային շահույթ չներառելու հետևանքով սակագները փոքր-ինչ նվազում են, թեև որոշ մշակաբույսերի համար, միևնույն է, բավականին բարձր են (օրինակ, Օնտարիո նահանգում սալորի բերքի ապահովագրության սակագինը հասնում է մինչև 32-36%-ի, որից արտադրողը վճարում է 1/3-ը):

³ Stop-Loss մեխանիզմը սկսում է կիրառվել, և պետությունը ծածկում է ապահովագրողի վնասները, երբ հատուցումները 3-4 անգամ գերազանցում են ապահովագրավճարները:

⁴ Հնդկաստանում ագրոապահովագրության սուբսիդավորման ծրագրի շրջանակներում սկսել են գործունեություն ծավալել 6 ապահովագրողներ՝ մատուցելով տեղի կլիմային համահունչ ապահովագրական ծառայություններ:

պահովագրական համակարգի զարգացման մակարդակով և սուբսիդավորման սկզբունքներով: Հիմնական տարբերությունը մասնավոր ապահովագրողների կողմից սեփական պահմանը թողնված ռիսկերի չափերի մեջ է: Ռիսկերի մի մասն ինքնուրույն ստանձնելու (մասնավոր վերաապահովագրողների կամ պետական վերաապահովագրական ֆոնդերում ռիսկերը տեղաբաշխելու հնարավորություն) հանգամանքը որոշ երկրներում (ԱՄՆ, Իտալիա) ծրագրի մասնակցության պայման է: Նշվածի այլընտրանքն Իսպանիայում և Թուրքիայում ներդրված համակարգն է, որտեղ մասնավոր ապահովագրողները, ըստ էության, ապահովագրության պայմանագրերի վաճառք իրականացնող գործակալներ են և կնքված պայմանագրերով պատասխանատվություն (այդ թվում՝ հատուցման) չեն կրում:

Արտասահմանյան փորձի ուսումնասիրության շրջանակներում որոշ երկրների անդրադառնանք առանձին-առանձին:

Գերմանիայում պետությունը չի սուբսիդավորում գյուղատնտեսական մշակաբույսերի առևտրային ապահովագրությունը: Ընդ որում, գյուղատնտեսական արտադրողների շուրջ 80%-ը կամավոր ապահովագրված են կարկուտի հավանական վնասի դեպքերից: Այստեղ չկա պետական աջակցություն բերքի կորստի դեպքում: Միայն առանձնահատուկ դեպքերում, երբ ֆերմերը բախվում է արտասովոր ու աղետալի իրավիճակի հետ, պետությունը կարող է որոշ միջոցառումներ ձեռնարկել:

Արտակարգ դեպքեր համարվում են այն վտանգները, որոնք ապահովագրական առևտրային կազմակերպությունները համարում են ֆորս-մաժորային և դրանց համար ապահովագրական ծածկույթ չեն ապահովում (ջրհեղեղ, փոթորիկ և այլ տարերային աղետներ): Ի հավելումն՝ արտակարգ իրավիճակ է դիտարկվում նաև անասունների կորուստը¹:

Պետական փոխհատուցում ստանալու առաջին պայմանն այն է, որ սեփական ֆերմերային ֆոնդը պետք է ամբողջովին սպառված լինի: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ ֆերմերի համար լինի վնասների նվազագույն մակարդակ, որից հետո կարող է պետական աջակցություն ցուցաբերվել:

Նույնիսկ այս պարագայում պետական ֆինանսական աջակցությունը չի կարող գերազանցել վնասի 35%-ը, իսկ փոխհատուցման մասին որոշումն էլ ընդունվում է դաշնային, համայնքային իշխանության կամ ԵՄ համապատասխան կառույցի կողմից:

Ֆրանսիայում գյուղատնտեսության ապահովագրության համակարգը ներկայացված է երեք ծրագրով.

1. CatNat ծրագրի երաշխիքները ծածկում են բնական աղետներից մասնավոր սեփականատերերի կամ կազմակերպությունների վնասների առավել նշանակալի մասը,
2. TOC ծրագրի երաշխիքները ծածկում են այն ռիսկերը, որոնք կապված են փոթորիկների, ցիկլոնների, կարկուտի հետ: Այս ծրագրով ևս ապահովագրվում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց ռիսկերը,
3. բերքի կորստի վնասի փոխհատուցման պետական երաշխիքներ:

¹ Стен Кардаш В.А., Природно-экономические основы и механизм самострахования фермерских хозяйств от неурожая.//Устойчивое развитие сельской местности: концепции и механизмы – М.: Энциклопедия российских деревень, 2001, էջ 92-94:

Գյուղատնտեսական ապահովագրությունը Ֆրանսիայում նույնիսկ առանձին օրենքով է կարգավորվում, և խոշոր գյուղատնտեսական վնասների համար կա գյուղատնտեսական արտադրության ազգային երաշխիքային հիմնադրամ (FNGCA):

Գյուղատնտեսության և ֆինանսների նախարարությունները սահմանում են ֆերմերների կողմից ապահովագրական վճարների սուբսիդավորման չափերը: Փոխադարձ ապահովագրության միություններն ու ապահովագրական կազմակերպությունները պայմանագիր են կնքում և կատարում են փոխհատուցումներ¹:

Ըստ էության, բնական աղետների ապահովագրության ֆրանսիական համակարգը ազգային համերաշխության հիմքով է կառուցված և լավագույն պաշտպանություն է տրամադրում այն ապահովագրողներին, որոնք առավել հաճախ են ենթակա տարերային աղետների և հիմնված է այն դրույթի վրա, որ բոլորը վճարում են միևնույն սակագնով՝ անկախ նրանից, թե ինչ ռիսկի են ենթակա:

Նորվեգիայում նույնիսկ մինչև ապահովագրական համակարգի ստեղծումը՝ դեռևս 1961 թ., ձևավորվել էր բնական աղետների հետևանքների վերացման պետական հիմնադրամ, որը ֆինանսավորվում էր բյուջեի հաշվին և գյուղատնտեսության նախարարության ենթակայության ներքո էր: Ապահովագրական համակարգի ներդրումից հետո արդեն այս հիմնադրամի հաշվին փոխհատուցվում են միայն այն դեպքերի հետևանքները, որոնք առևտրային ապահովագրական պայմանագրերի ծածկույթի մեջ չեն մտնում (ջրհեղեղ, փոթորիկ, երկրաշարժ, հրաբուխ և այլն):

Բելգիայում ևս գործում է հատուկ հիմնադրամ (ստեղծվել է 1976 թ.), որը փոխհատուցում է բնական աղետների հետևանքով վնասները:

Ընդ որում, հիմնադրամի միջոցները օգտագործվում են միայն այն դեպքերում, որոնք բացառված են առևտրային ապահովագրական կազմակերպությունների պայմանագրերից կամ ունեն ոչ բավարար ապահովագրական ծածկույթ: Հիմնադրամի միջոցներով ծածկվում են միայն ուղղակի ռիսկերը և բացառվում են ձեռնարկատիրական ռիսկերը, իսկ փոխհատուցումը կատարվում է կա՛մ դրամական օգնության ձևով, կա՛մ սուբվենցիաների:

Պետական երաշխիքների մեխանիզմը իրագործվում է նաև վերաապահովագրության համակարգում մասնակցությամբ և առաջին հերթին վերաբերում է փոխադարձ ապահովագրության միությանը:

Հունաստանում գյուղատնտեսության ապահովագրությունը առավելապես պետական է: Պետությունն իր կազմակերպության միջոցով հավաքում է ապահովագրական վճարները, կարգավորում է ծրագրի գործողությունը և երաշխավորում վնասների հատուցումը:

Առևտրային ապահովագրական ընկերությունները զբաղվում են միայն այն մշակաբույսերի ապահովագրությամբ, որոնք տեղ չունեն պետական ծրագրերում: Այս փորձը արձանագրվել է որպես ոչ արդյունավետ համակարգ, և ներկայումս շարունակվում են բարեփոխումները:

¹ St'iu Коваленко Н., Обзор зарубежного опыта по страхованию сельскохозяйственных культур. // Информационный бюллетень «Агрострахование в России». – 2004. – октябрь. էջ 57:

Իսպանիայում և Պորտուգալիայում արդյունավետ աշխատում են պետության և մասնավոր հատվածի սերտ համագործակցության վրա հիմնված համակարգերը, որտեղ առանցքային դեր ունի պետությունը:

Ապահովագրական բիզնեսը ինտեգրված է պետական կառավարման համակարգին:

Ներկայումս Իսպանիայում գործող ապահովագրական համակարգը առավել արդյունավետներից է և ուղղված է պետության, կառավարությունների, առանձին տարածաշրջանների ու գյուղմթերքներ արտադրողների շահերի օպտիմալ համադրությանը: Ընդունված է, որ տարերային աղետների հետևանքով բերքի կորուստների փոխհատուցման պետական միջոցառումների իսպանական համակարգը Եվրոպայում ամենաարդյունավետն է: Այստեղ փոխհատուցվում են ոչ միայն մշակաբույսերի, այլ նաև անասունների կորուստները:

Պետք է նշել նաև, որ բերքի ապահովագրությունը Իսպանիայի համագային գյուղատնտեսական քաղաքականության անբաժան մասն է, և դրանում ընդգրկված են ոչ թե ապահովագրական կազմակերպությունները, այլ թե՛ ֆերմերները, թե՛ պետությունը (ի դեմս գյուղատնտեսության և ֆինանսների նախարարությունների):

Ավելին, Իսպանիայի կառավարությունը ուղղակիորեն մասնակցում է վերաապահովագրությանը, քանի որ իրականացնում է ռիսկերի հիմնական ծածկման գործընթացը՝ միայն շատ փոքր բաժին թողնելով մասնավոր վերաապահովագրողներին:

Իտալիայում և Ավստրիայում գերակշռում է գյուղատնտեսական ռիսկերի մասնավոր ապահովագրությունը: Ապահովագրության սխեմաներն այս երկրներում գրեթե նույնական են: Ավստրիայում արդեն երկար ժամանակ է գործում է կարկուտից ապահովագրման մասնագիտացված կազմակերպություն, որը ստեղծվել է բոլոր մյուս կազմակերպություններում առկա պոլիսների ներգրավմամբ և, ըստ էության, չունի մրցակիցներ և ունի միասնակացված խորհրդատվություն վնասների գնահատման մասով:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ Եվրոպական միությունը չունի պետական միջոցառումների միասնական համակարգ, որը ԵՄ անդամ պետությունները կկիրառեն ապահովագրական պատահարի դեպքում:

Յուրաքանչյուր երկիր ունի բավականին մեծ ճյուղավորմամբ այնպիսի միջոցառումների համակարգ, որում կարելի է առանձնացնել երկու խումբ: Առաջին խումբը այսպես կոչված միանվագ ու մեկանգամյա վճարումներն են՝ ավելի հաճախ՝ օգնության կամ վնասի հատուցման տեսքով: Երկրորդ խումբը գյուղատնտեսական ապահովագրավճարների սուբսիդավորման համակարգն է: Չապահովագրված վնասները, որոնք առաջանում են տարերային աղետների հետևանքով, որպես կանոն փոխհատուցվում են պետական ֆոնդերի հաշվին:

ГАГИК АКОПЯН
СТРУКТУРА ВНЕДРЕНИЯ СТРАХОВАНИЯ
СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО РИСКА

Ключевые слова: *агрострахование, пилотная программа, растениеводство, стихийные бедствия, страховые риски, перестрахование, субсидирование.*

Сельское хозяйство является одной из сфер экономики, которая подвержена прямому воздействию природных сил и подвергается наибольшему риску ущерба от этого влияния. Поэтому во всех развитых странах существуют системы сельскохозяйственного страхования, которые способствуют снижению возможных убытков и потерь.

В этой статье обсуждаются и описываются ключевые особенности системы страхования в нескольких странах с развитым сельским хозяйством, а также цель изучить и найти подходящую систему для РА.

GAGIK HAKOBYAN
INVESTMENT POINTS OF AGRICULTURAL RISK INSURANCE

Key words: *agricultural insurance, pilot program, crop production, natural disasters, insurance risks, reinsurance, subsidies.*

Agriculture is one of the spheres of economy that is affected by the direct impact of natural forces and is exposed to the greatest risk of damage from that influence. Therefore, in all developed countries, there are existing agricultural insurance systems that contribute to the reduction of possible damages and losses.

This article discusses and describes the key peculiarities of the insurance system in several economies with advanced agriculture and aims to explore and find the appropriate system for RA.

ԴԱՎԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

Կոմերցիա, բակալավրիապ, 2-րդ կուրս

ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ: ՄԱՅՆԻՆԳ

Հիմնաբառեր. *կրիպտարժույթ, մայնինգ, բիթքոյն, սափրոշի, բիթքոյն քեշ, մայնինգ ֆերմա*

Կրիպտարժույթը թվային արժույթի մի տեսակ է, որի ստեղծումը և վերահսկումը հիմնված է գաղտնագրային մեթոդների վրա: Որպես կանոն, կրիպտարժույթի հաշվառումն ապակենտրոնացված է: Ապակենտրոնացված վճարային համակարգի հայեցակարգը Սափրոշի Նականոպոն առաջ է քաշել 2008 թ. հոկտեմբերի 31-ին: Դրա հիմնական սկզբունքներն են՝ բոլոր մասնակիցների գաղտնիությունը, զեղծարարությունից պաշտպանությունը և վերահսկող մարմիններից անկախությունը: 2017 թ. դրանց քանակը գերազանցել է 2000-ը:

Ամեն ինչ սկսվեց 1990-ականներին, երբ մի քանի առցանց խաղային համակարգերը ստեղծեցին սեփական «դրամը» (World of Warcraft): Բայց դա